**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման իրականացման համար կազմակերպված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 30.09.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ պայմանագրում 2022 թվականի մայիսի 2-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 17.02.2022 թվականի N 200-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե:

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4**
**30.09.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ պայմանագրի**

ք. Երևան «02» 05 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ն ի (այսուհետ՝ Կատարող), դեմս տնօրեն Լ. Պողոսովայի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.02.2022թ. N 200-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման իրականացման համար Կողմերի միջև 30.09.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** | **ԿԱՏԱՐՈՂ՝** |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք. Վանաձոր, Վարդանանց 23/159 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ |
| Հ/Հ 900011023778 | Հ/Հ 2050222017631001 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 06938925 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| _____________ Ա. Մկրտչյան | _____________ Լ. Պողոսովա |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված*
*30.09.2019թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/11Հ գնման պայմանագրի*
*«02» 05 2022թ. կնքված N 4 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | dimac | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | 2019թ. վճարված գումար | 2020թ. վճարված գումարը | 2021թ. վճարված գումարը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111140-1 | Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | 185 900 | 138 700 | 190 372 | - | - | - | - | 355 500 | 355 500 | 567 000 | 567 000 | 567 000 | 567 000 | 567 000 | 567 000 | 567 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝ ________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Վարդանանց 23/159
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222017631001
ՀՎՀՀ 06938925

Տնօրեն՝ ________ Լ. Պողոսովա
(ստորագրություն)
Կ.Տ.